

ներդաշնակ բաղադրութեամբ (orchestration) կ'արտայայտէ իր մտածումը, իր հոգեկան յայզերը:

Հին հելլենները կը գործածէին «համա-նուագ» բառը (symphonie) որ կը նշանա-կէր համեմատութեանց ներդաշնակ միաւո-րում մը՝ ճարտարապետական ամբողջու-թեան մը մէջ, ինչպէս երաժշտութեան:

Հայ ճարտարապետը իր շինութիւններու յաջող սարքաւորումով, զանգուածներու ինքնայատուկ զուգադրութեամբ մը դարեր շարունակ արտայայտած է մտածում մը, կրկնելով միշտ միեւնոյն ճարտարապետա-կան նախադասութիւնը: Այլապէս է որ ան ունեցած չըլլայ, այդ նախադասութիւնը կազմելու իր կանոնը: Այդ՝ դեռ անծանօթ՝ կանոնը պիտի համապատասխանէ հայկա-կան ներդաշնակութեան՝ ճարտարապետու-թեան մէջ:

Թորոս Թորամանեան, հայկական ճար-տարապետութիւնը վերակենդանացողը, կը գրէ (6):

«Հակառակ հետագայ դարերու հայ ճար-տարապետաց համաշափութեան օրէնքնե-րուն դէմ ընդվզող յատկութեան, որչափ գծաւորութիւններու հանդիպեր է Տեկորի տաճարին յաւելումները կատարող համա-շափութեան ծայրայեղ սիրահար ճարտա-րապետը, որչափ որ չէ յաջողեր, սակայն անոր ջանքերուն անջնջելի հետքերը մնացեր են շէնքին վրայ»:

Եւ աւելի հեռուն, այն համաշափութեան խնդիրին անդրադառնալով՝

«..... ճշմարիտ է որ հայերը համաշա-փութիւնը չեն սիրած, սակայն մասեր կան շինութեանց մէջ, որոնք անհրաժեշտ չա-փերու միօրինակութիւն կը պահանջեն, այսպիսի տեղերու վրայ ալ յաճախ անկա-

նոնութիւններ տեսնուիլը, ինծի առիթ կու տայ մտածելու, որ արուեստագործութեան մէջ այնքան մաքրութիւն և կանոնաւորու-թիւն սիրող վարպետներ չէին սխալեր չափերու մէջ, եթէ իրենց ձեռքը գտնուած չափերը զիրենք խարող յատկութիւններ չունենային»:

Ուրեմն, խնդիրը նախ կը կայանայ դիտ-նալուն մէջ թէ «հայերը համաշափութիւն սիրած են թէ ոչ»:

Ընդհանրապէս Թորամանեանի առար-կութիւնները կը վերաբերին մանրամաս-նութեանց. սիւնի մը համաշափ դասաւո-րումին, պատուհանի մը ճշգրիտ տեղաւո-րումին: Սակայն՝ սխալ պիտի ըլլայ քանի մը փոքր սոյթաքումներէ, մանրամասնու-թեանց մէջ՝ որ ամբողջական ներդաշնա-կութեան վրայ օրեւէ ազդեցութիւն չունին, հանել կարեւոր հետեւանք մը «համաշա-փութիւն չսիրելու» աստիճան, թէեւ Թո-րամանեանի գիտողութիւնը ճիշտ ըլլայ, հայ ճարտարապետին ձեռքը գտնուած չափի գործիքներու մասին:

Արդարեւ, եթէ հայերը «համաշափու-թիւն սիրած չըլլային» և կամ ներդաշնա-կութեան մասին գաղափար և ճաշակ չու-նենային ինչպէս զուլիս-պիտի հանէին այն-քան գեղեցիկ քանդակադարձերը մեր խաչ-քարերուն, ուր ի յայտ կու գայ ճշմարիտ «ուսողական միտք»ի մը գոյութիւնը՝ հայ վարպետին մօտ (7):

Աւելի՛ եթէ համաշափութեան և զան-գուածներու համեմատութեանց մասին հայ ճարտարապետը չունենար որոշ հասկողութե-թիւն մը, ինչպէս պիտի կրնար այնքան վարպետօրէն համադրել ուղղանկիւն քա-ռանկիւն զանգուածի մը վրայ՝ դուռտ մը, գլան մը և կոնաձեւ տանիք մը, գլուխ գործոց շինուածք մը ստանալու համար:

7. Ս. Ճիվահիրճեան «La sculpture décorative arménienne» Pro Arte. Genève 1945, թիւ 41, septembre.

6. Թ. Թորամանեան, «Պատմական հայ ճարտարա-պետութիւն, Տեկորի Տաճարը», էջ 28 և 48. Թիֆլիս 1911.

Անտարակուսելիօրէն հայ շէնքը իր ամ-բողջութեանը մէջ կը ներկայացնէ կատա-րեալ ներդաշնակութիւն մը, որ առաջ կու գայ կարգ մը իրենք իրենց մէջ նկատուած՝ աններդաշնակ զանգուածներու համադրու-թեանէն: Ներդաշնակութեան ուրիշ բեւեռ-մըն ալ կը կազմէ մեծ զանգուածները՝ զարդարել նրբին զարդաքանդակներով: Այս պարագան առաջ կը բերէ հակադրութիւն մը, որուն խոտոր համեմատութիւնը ընդե-լուզուած զանգուածներու համադրութեան՝ մաս կը կազմէ ընդհանուր ներդաշնակու-թեան մը կազմութեանը:

Խոշոր զանգուածներու և նրբին զարդերու հետ յաջող կերպով խաղալու համար ան-պատճառ հայ վարպետը ունեցած է որոշ կանոն մը համեմատութեանց: Որովհետեւ համաշափութիւնը և համեմատութիւնը ճարտարապետութեան համար այն են՝ ինչ որ է քերականութիւնը լեզուի մը համար: Եւ անկարելի է գեղեցիկ և լաւ համեմա-տուած կերտուածք մը զուլիս հանել առանց ներդաշնակութեան կանոններու:

Այդ կանոնը գոյութիւն ունեցած է և շատ հաւանական է որ մեր ճարտարապետու-թեան պատմութեան հետագայ դարերուն մէջ ան արդէն կորսնցուցած էր ազդեցու-թիւնը և կամ հետագայ դարերու ճարտա-րապետները մոտամբ կորսնցուցած էին զայն: Որովհետեւ ոչ մէկ գրութիւն, ոչ մէկ մատեան զայն յաւերժացուցած է:

Անգիր գրականութեան նման, ան կը փոխանցուէր բերնէ բերան, վարպետէն իր աշակերտը: Եւ թերեւս ալ այդ ըլլայ պատ-ճառը որ հայ վարպետը միշտ մնացած է իր աւանդական շինուածաձեւին կառչած, անոր քանի մը դարաւոր փոփոխակները մէջ ընդ մէջ գործածելով: Մենք չենք տեսներ մեր ճարտարապետութեան պատ-մութեան ընթացքին ոչ մէկ կարեւոր փոփո-խութիւն շինելու ձեւի և կամ ոչ մէկ փորձ նոր համեմատութիւններ փնտռելու:

Անգամ մը որ շինուածանիւթի ընձեռած կարելիութիւններու սահմանին մէջ հաստա-

տուած է համաշափութեան կանոնը, ալ անկից չէ ուզած զարտուելի հայ ճարտա-րապետը. մինչդեռ օրինակ՝ իրեն ժամա-նակակից հռովմայեցիք և ապա բիւզան-դացիք դիւրաւ կ'անցնէին մէկ շինուածա-ձեւէն միւսը և զանգուածներու նոր համա-դրութիւններ գործածելու չէին քաշուիր:

Հռովմայեցիք՝ հելլենական շինուածքէն կ'անցնին քարաշէն կամարներու և զմբէթ-ներու գործածութեան և նոյնիսկ կը փորձեն խաչաձեւուած կամարներ (voûte d'arret): Բիւզանդացիք՝ ծ-րդ դարուն բոլորովին կը փոխեն իրենց զմբէթին ձեւը և կ'ընդգրկեն հայկական կաթողիկէն և իրենց համեմա-տութիւններու և ներդաշնակութեան կա-նոններու մէջ կ'անցնին անոր հնգապա-տիկ գործածութիւնը: Մինչդեռ հայերս կը մնանք աւանդական շինուածաձեւի վրայ, կառչած անոր կանոններուն, որոնք դարէ դար, բերնէ բերան կը սկսին մաշիլ ու խաթարուիլ: Հազիւ թէ՛ շինուածքի թէքնիք տեսակէտէն քանի մը բարեւաւումներ կը գործածուին, ինչպէս են կամարակները (trompillon), օղնոյցները (pendentif) և կամ շէկերու դրութիւնները (8): Բարեփոխու-թիւններ՝ որոնք չեն վերիվայրեր զանգուած-ներու շարուածքին, միանգամ ընդ միշտ հաստատուած ներդաշնակութեան կանոնը: Ասիկա անոր համար որ հայ ճարտարապե-տին գտած համաշափութեան և համեմա-տութեան կանոնը, գծային (lineaire) լուծում մը եղած է, որ կու տայ որպէս արմատ, մէկ պատասխան: Այս է պատ-ճառը որ կարելի չէ եղած գործածուած զանգուածներու համեմատութեան բազմա-թիւ լուծումներ, արմատներ (racines) գրա-

8. Չիլերու գործածութիւնը, շինուածքի թէքնիքին տեսակէտով հսկայ կարեւորութիւն ունեցող պարագայ մըն է, որ Հայաստանի սահմաններէն դուրս շատ հեռու ներք փոխադրուելով ծնունդ տուաւ գոթական շինուա-ծաձեւին. Ս. Ճիվահիրճեան՝ «հայկական կամարը գո-թական ոճին մէջ» Վենետիկ 1941. - Պաթրիստայթիո՝ «L'Ogive et L'Armenie» E. Leroux. Փարիզ:

ներ: Այս պարագան թերեւս հետեւանքը ըլլայ գործածուած շինուածանիւթին: Այս պայմաններուն մէջ հայ ճարտարապետին համար անկարելի էր շէղիլ տրուած միակ լուծումը – կանոնէն առանց շէնքին համալսարանութիւնը վտանգելու:

Առաւելագոյն փոփոխակները, զոր հայ վարպետը յաջողած է գտնել իր ներդաշնակութեան կանոնին մէջ, առաջ կու գան այդ կանոնին ունեցած որոշ ճկունութիւնէն, որուն շնորհիւ ան կրնար հաւասար յաջողութեամբ այդ ներդաշնակութիւնը ձեռք բերել ըլլայ քառանկիւն ուղղանկիւնի պարզ լիք շինուածածէին և թէ կը որ ու կամ բազմանկիւնի շինութիւններու վրայ:

Այս կանոնի ճկունութիւնը կարելի է բացատրել, ուսողական ասացուածքով մը, թէ զծային արմատը որոշ սահմաններու մէջ մնալու պայմանաւ փոփոխական է:

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԵԶՐԵՐԸ

Շինուածքի մը մէջ ամէնէն կարեւոր ներդաշնակութեան համեմատութիւնները պիտի կազմեն.

ա) շէնքին յատակագիծին չափերուն համեմատութիւնները: Այսինքն երկայնքին և լայնքին միջեւ գտնուող յարաբերութիւնը որ մակարդակային երկու չափի (dimension) համեմատութիւն մըն է:

բ) շէնքին երկայնքին ու բարձրութեան միջեւ եղած համեմատութիւնները, որ կը վերածուին երեք չափի, եթէ նկատի առնէք որ երկայնութիւնը ինքնին մէջ կը բերէ լայնքի չափն ալ: Ասիկա զմեզ կ'առաջնորդէ միջոցի մէջ գտնուող հատուածակողմի (prisme) համեմատութիւններուն, այսինքն զանգուածի համեմատութիւններուն:

գ) շէնքին բարձրութիւնը, ինքնիրեն առնուած, կը պարփակէ կարգ մը համեմատութիւններ իր բազկացուցիչ մասերուն միջեւ:

Որպէս զի կերտուածքին ամբողջութիւնը ներդաշնակութիւն մը ներկայացնէ՝ պէտք է որ համեմատութեանց այս զանազան եղբերը իրարու հետ ունենան որոշ կապակցութիւն մը, համեմատութիւն մը:

Այսպէս՝

$$\frac{\text{Երկարութիւնը}}{\text{Լայնքին}} = \frac{\text{Երկարութիւնը}}{\text{Բարձրութեան}} = \frac{\text{շէնքին ընդհ. բարձրութիւնը}}{\text{կաթողիկէին բարձրութեան}} = \frac{\text{կաթողիկէին բարձրութիւնը}}{\text{կաթողիկէին տանիքին և այլն.}}$$

ահա, այս ընդհանուր համեմատութիւնն է որ կը կոչուի ներդաշնակութեան կանոն:

Բոլոր ճարտարապետութիւններն ալ ունեցած են իրենց ինքնայատուկ կանոնները և համեմատութիւնները զանգուածներու շարուածքին ներդաշնակութիւնը ապահովելու համար⁽⁹⁾: Նոյնիսկ միջին դարեան որմնադրական «լոժ»երը իրարմէ կը սարբերէին ճիշտ այս համեմատութիւնները ներկայացնող թիւերով:

Հայկական ճարտարապետութիւնն ալ պէտք է ունեցած ըլլայ իր որոշ համեմատութիւնը: Այդ համեմատութեան պըրպտումը մենք պիտի փորձենք ներդաշնակ գիծի (trace harmonique) գրութեան հիման վրայ, զոր ներկայացուցինք առաջին մասին մէջ:

Սակայն՝ նախ քան մեր պրպտումին սկսիլը պէտք է նկատի առնենք պարագայ մը, որ աշխատութիւնը զգուարացնելու և պրպտումները իրենց ճամբէն շեղեցնելու

9. Որինակ՝ հելլենական յատակագիծին համեմատութիւնը կը համապատասխանէ $\sqrt{5}$ ի. արգղ քառանկիւնի մէջ, որ հելլենական տաճարը կը ներկայացնէ, արամազիծը ազ, հետեւեալ յարաբերութեամբ կապուած է քառանկիւնին ար լայնքին և ըզ երկարութեան. $ար^2 + ըզ^2 = ազ^2$: Արդ հելլենական ճարտարապետութեան մէջ $ար = 1$, $ըզ = 2$, որ կու տայ $1^2 + 2^2 = ազ^2$ որմէ կը ստանանք $ազ = \sqrt{1 + 4} = \sqrt{5}$:

բնոյթ ունի: Արդարեւ, եթէ հայկական շէնքերու նախնական յատակագիծերը և կերտուածքը կը հետեւին որոշ ներդաշնակութեան մը կանոններուն և թէ հայ ճարտարապետը՝ յառաջադրու դարերու՝ ջանալով է իր շէնքերը ներդաշնակօրէն կերտել, սակայն հետագայ դարերուն, հայկական զպրոցի անկման շրջանին, հետզհետէ նախնական շէնքերուն վրայ կատարուած զանազան նորոգութիւններու և յաւելումներու ընթացքին աչքէ կորսուած է ներդաշնակութեան կանոնները յարգելու պարտաւորութիւնը: Այնպէս որ զժբախտ շինութիւններ եկած են խաթարել նախնական շէնքին անտրտա ներդաշնակութիւնը և զայն խճուղել անյարմար յաւելումներով: Ասիկա յաճախ այն աստիճան որ բոլորովին կորսուի շէնքին իսկական արտայայտութիւնը:

Ուրեմն, նման շինութիւններ կարենալ քննելու համար պէտք պիտի ըլլայ զանոնք մերկացնել իրենց յաւելուածական շինութիւններէն, որպիսին է օրինակ՝ «Ժամա-

տուն»ի պարագան: Այս աշխատութիւնը, պէտք է խոստովանիլ, այնքան աւելի կը զժուարանայ՝ որքան հայկական ճարտարապետութիւնը, յատակագիծի տեսակետէն, շատ մը այլազանութիւններ կը ներկայացնէ: Հոն կը հանդիպինք ուղղանկիւն քառանկիւնի, կլոր, աստղաձեւ, բազմանկիւնի, խաչաձեւ յատակագիծներու բոլոր փոփոխակներուն: Կան շէնքեր որոնց մէջ կաթողիկէն վեր բանուած է չորս անջատ մայթերով, երբեմն այդ մայթերը կը նոյնա- նան որմերու յառաջխաղաց գիւղին հետ, երբեմն ալ որմամայթերով վեր բանուած է կաթողիկէն եւայլն:

Պիտի չմոռենանք շինուածքին բոլոր մանրամասնութեանց, միայն պիտի գոհանանք գլխաւոր տիպերու քննութիւնով և ընդհանուր ներդաշնակութեան կանոնը պրպտելով:

Ճարտ. Ս. ՃԵՎԱԶԻԲՃԵԱՆ

(Շարունակելի)

A U T O M N E

L'horizon est obscur, le ciel azur voilé.
L'onde révolutionne et la morne pluie tombe.
Plus d'astre solitaire, ni zénith étoilé;
Cérès, Naïades, Sylphides. tout descend dans la tombe.

Aussi mon sombre cœur sanglotte avec le temps;
Mon âme en désarroi cherche en vain son idole,
Ses enivrants Amours d'un tourmenté printemps.
Tel qu'un essaim d'oiseaux, mon beau passé s'envole!

Tout n'est qu'épines et ronces sur mon triste chemin,
A mes mortels chagrins, tout mon être frissonne.
Qui, dans mon dénûment, veut me tendre la main
Pour soulever ma croix? Personne, hélas! personne.

LÉON CAPAMADJIAN

Ծանօթ. – Պր. Լեւոն Գարամաճեան նախկին Ս.-Ռ. սան, հմուտ ընկերային և փիլիսոփայական գիտութեանց, աշխատակցած է Ֆրանս. զանազան թերթերու, և ներկայիս կը գտնուի Պոլսու: